

մէջ՝ ըսելով. «զգոռնակ (զունակ¹) քանակ եւ զարգանակ» (Մտթ. Բ, 69), որոց առաջինը կը նշանակէ ջրալից կերակուր՝ ընդեղէն եւ այլ նիւթերով, եւ երկրորդը՝ մսի ջուր, որ սահմանուած էին ախորժակ պատրաստելու: Ասոնց կանխելն անկից յայտնի է՝ որ խորենացին սպասուց յիշատակութեան մէջ նախ «տարգալը» կը դնէ՝ որով կ'ուտուէին ադոնք (հմմտ. աստ, 59), յետոյ «պատառաքաղը», եւ հուսկ «նուագը» (խոր. 124). այս ինքն իրենց գործածութեան կարգին համեմատ: Հաւանական է՝ թէ այս կերակրները կը բերէին սխառռակներով կամ ափսեկներով՝ որ իրենց խորութեամբ յարմար էին այդ պաշտօնին (աստ, 62-4), կը բաշխէին պնակաց մէջ (62), եւ կը դնէին կոչնականաց առջեւ:

Գ. կը յաջորդէին հաստատուն ուտեստները, որոնք շատ զանազան էին մեր ազնուականաց խնճոյից մէջ: Փարպեցւոյն է համարին մտադիր ընթերցումը ցոյց կուտայ մեզ ոչ միայն անոնց տեսակները, այլ եւ Այրարատայ՝ ազատաց սեղանին պարգեւած բարութեանց կարգաւոր յիշատակութեամբը տեղւոյ մը մէջ՝ կարծես մեր առջեւ կը դնէ անոնց ճաշակման կարգն

1. Ուղղելի է «զունակ զունակ», որ է զանազան տեսակ: